


Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Յիսուսայ
յանձն
կ'առնէ



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Մովսես մահացաւ: Յիսուայ
գիտէր, թէ Աստուած զինք
զատած էր, որպէսզի առաջնորդէ
իսրայելացիները: Նախքան
Յիսուայ բանակը պատրաստեր
պետք է, որ ինքզինք պատրաստէ:
Աստուած Յիսուային
յաղթանակ խոստացաւ
եւ խոստացուած
հողերուն մէջ
կալուածներ,
եթէ ժողովուրդը
տեւական
հնազանդէր
Աստուծոյ խօսքին:





Իսրայելացիք
խոստացան
Յիսուային
հետեւիլ
եւ միշտ
Աստուծոյ
խօսքին
հնազանդիլ:



Խոհեմօրէն նոր առաջնորդը լրտեսներ դրկեց
Քանաան, որպէսզի ուսումնասիրեն անոնց հզօր
քաղաքին Երիքոսի պաշտպանութիւնները:

Իսրայելի առաջին
պատերազմը հոն
պիտի մղուէր:






Մէկը Երիքոսի թագաւորին ըսաւ, որ լրտեսներ
կան քաղաքին մէջ: Ան իր զինուորները դրկեց,
որպէսզի գտնեն զանոնք: Փնտռտուքը սկսաւ
Ռահապի տունին, ուր երեք մարդիկ կը մնային:
Չինուորները ուժգին զարկին դուռը: Ռահաբի
արագօրէն մարդիկը պահեց:



Երբ գինուորները
մեկնեցան, Ռահաբ
պարանը գործածեց,
որպեսզի մարդիկը
իջեցնե քաղաքին
պարիսպներեն
դուրս: Ինչո՞ւ ան
օգնեց լրտեսներուն,
որովհետեւ ան
գիտեր, որ Աստուած
անոնց հետ է: Ան
կ'ուզէր, որ Աստուած իր
կեանքը պահեր: Լրտեսները
խոստացան ազատել
Ռահաբը եւ իր ընկերները:




Նախքան Երիքով հասնին, իսրայելացիք պետք է,
որ Յորդանանի գետը անցնեին, դեպի Քանաան,
խոստացուած հողը: Սակայն իոն կամուրջ չկար:
Ի՞նչպէս ժողովուրդը պիտի կարենար անցնիլ:



Աստուած Յիսուային ըսաւ, որ քահանաները իրենք
պետք է առաջնորդեն զինուորները եւ ժողովուրդը,
իրենց հետ շալկելով խորանը, որ տասը
պատասխանները կը պարունակէր: Անմիջապէս
որ քահանաներուն ոտքերը դպչեցան գետեզերքին
Աստուած հրաշք մը գործեց: Աստուած չոր ցամաք
մը բացաւ գետին մէջէն:



Ամբողջ ժողովուրդը անցնել է ետք, անոնք
տասներկու խոշոր ժայռեր գետեղեցին գետին
յատակը եւ ուրիշ տասներկու ժայռեր Քանաանի
գետեզերքը: Ասիկա ըրին, որպէսզի
ժողովուրդը յիշէ եւ սորվեցնէ
իրենց զաւակներուն
Աստուծոյ հզօր
ուժին եւ սիրոյ
մասին:





Երիբոյ հաստ եւ զօրաւոր
պարիսպներ ունէր:
Յիսուայ ծրագրեց իր
յարձակումը, Աստուած
իր բանակի ղեկավարը
ղրկեց երկինքէն, որ
յիշեցնէ Իսրայէլի նոր
առաջնորդին, որ
Աստուած կը յաղթ
պատերազմները
իւր ժողովուրդին
համար:






Աստուած Յիսուային ըսաւ, որ ինչպէս պիտի
յարձակի: Շատ տարօրինակ ծրագիր մըն էր:
Աստուծոյ ժողովուրդը պիտի քալէր քաղաքին
շուրջը օրը մէկ անգամ վեց օր շարունակ, եւ
եօթը անգամ եօթներորդ օրը: Այդպէ ետք
փողերը պիտի հնչեցնէին եւ պռռային եւ
քաղաքի պատերը պիտի փլուէին:




Յիսուան եւ իր բանակը ըրին ինչ
որ Աստուած հրամայեց: Թերեւս
Երիբովի ժողովուրդը վրանին կը
խնդար, բայց եօթներորդ արշաւը
եօթներորդ օրը քահանաները հնչեցին

7



խոյի կոտոշներով
փողերը: Եւ ինչպէս
որ Աստուած
խոստացած
էր... Երիբովի
հզօր

պարիսպները
տապալեցան:





Միայն Ռահապի տունը
պատին տակ ապահով
մնաց: Ան ալ կարմիր
գույն պարանը ձգած
եր պատուհանէն
կախուած:






Շուտով, Յիսուայի մարդիկը
ազատեցին Ռահապը և իր
ընտանիքը: Այդպէ ետք
Երիքովն կործանեցաւ
ինչպէս որ Աստուած
հրամայեց:






Յիսուայ միայն
Աստուծոյ գործին
համար նուիրեց Յիսուայի
ոսկիները, արծաթները եւ գանձերը:
Ետքը ան անէծք մը դրաւ անոր որ
նորէն կ'ուզէ վերաշինել այդ քաղաքը:





Շուտով ամեն մարդ
Քանաանի մեջ իմացաւ, որ
յաղթեց Երիքովի: Անոնք գիտէին,
որ Աստուած իր ժողովուրդին հետ է:



Յիսուայ յանձն կ'առնէ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Յիսուայ 1 - 6

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

